



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ



ԱՐՏԱՀԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ
ՏՈՒՐՔԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԻ ՄԻՆԶԵՎ 10 ԱՆԳԱՄ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՐ



ԵՐԵՎԱՆ 2022



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆ**



ԱՐՏԱՀԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

**ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԻ
ՄԻՆԶԵՎ 10 ԱՆԳԱՄ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ ԴԱՏԱԿԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՐ**

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն3

Գլուխ 1. Պետական տուրքի բարձր դրույքաչափերի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներն ու հանրային մտահոգությունները.....6

Գլուխ 2. Խնդրո առարկա կարգավորումների և դրանց հիմնավորումների անընդունելիությունը՝ դատական պաշտպանության (դատարանի մատչելիության) իրավունքի պատշաճ երաշխավորման տեսանկյունից.....9

Գլուխ 3. Պետական տուրքի բարձր դրույքաչափեր սահմանելու իրավաչափությունը անձի դատական պաշտպանության (դատարանի մատչելիության) իրավունքի պատշաճ երաշխավորման տեսանկյունից. խնդրի դիտարկումը սահմանադրաիրավական և միջազգային իրավական հարթություններում 16

Գլուխ 4. Պետական տուրքի դրույքաչափերի դիտարկումը համաչափության սկզբունքի ապահովման տեսանկյունից..... 21

Ներածություն

2021 թվականի հոկտեմբերի 29-ին ուժի մեջ են մտել «Պետական տուրքի մասին» օրենքում կատարված այն լրացումներն ու փոփոխությունները, որոնցով զգալիորեն բարձրացվել են դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև գործում առկա լուսանկարների (լուսաժապավենների), ձայնագրությունների, տեսագրությունների և դրանց էլեկտրոնային կրիչների բնօրինակից պատճենահանված կրիչ տալու համար նախատեսված պետական տուրքի դրույքաչափերը:

Օրինակ՝ պետական տուրքի նվազագույն շեմը 1500 դրամից դարձել է 6000 դրամ, ոչ դրամական պահանջներով հայցադիմումների համար նախատեսված 4000 դրամ պետական տուրքը՝ 20.000 դրամ, ոչ դրամական պահանջի գործերով վերաքննիչ բողոքների համար նախատեսված պետական տուրքը 10.000 դրամից՝ 30.000 դրամ, վճռաբեկ բողոքների դեպքում՝ 20.000 դրամից 40.000 դրամ, իրավաբանական անձանց սնանկ ճանաչելու դիմումների համար նախատեսված 500.000 դրամ պետական տուրքը՝ 1.000.000 դրամ, իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման մասին դիմումների համար ներկայիս 2.000 դրամը՝ 20.000 դրամ և այլն: Վերացվել են նաև պետական տուրքի գծով առկա որոշ արտոնություններ:

Մտահոգիչ է, որ սահմանված նոր դրույքաչափերը ստեղծում են մարդու խախտված իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու խոչընդոտներ և հանգեցնում են դատարանի մատչելիության անհիմն սահմանափակումների:

Սույն զեկույցում հատուկ անդրադարձ է կատարվել նաև պետական տուրքի դրույքաչափերը մի քանի անգամ բարձրացնելու հիմնավորումներին, որոնք Մարդու իրավունքների պաշտպանը ներկայացրել էր նախագծի ընդունման փուլում: Այդ հիմնավորումներն այնպես են գրված, որ ստացվում է դատարանների բնականոն գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ ծախսերը հնարավոր է ծածկել միայն պետական տուրքերի գումարներն ավելացնելով ու դրանցից ստացվող միջոցների հաշվին:

Այդպես լինի՝ նշանակում է որքան շատ բարձրացնենք տուրքերի գումարները, այնքան արագ ու հեշտ կլուծվեն դատական համակարգի խնդիրները: Իրականում, այս խնդիրները լուծելու ճանապարհը ոչ թե պետական տուրքերի գումարներն ավելացնելն է, այլ տարի «ՀՀ պետական բյուջեի մասին» օրենքներով ՀՀ դատարանների բնականոն գործունեությունն ապահովելու համար ՀՀ դատական դեպարտամենտին գումարների հատկացումը, ինչն էլ յուրաքանչյուր տարի արվում է հենց այդ նպատակով:

Այսինքն՝ արդարադատության շահառուն ողջ հասարակությունն է, ուստի առնվազն ճիշտ չէ դատարանների բնականոն գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ ծախսերի վճարման ողջ բեռը միայն դատավարության մասնակիցների վրա դնելը: Այս

ճանապարհը պարզապես հանգեցնելու է դատարանի մատչելիության սահմանադրական ու կոնվենցիոն իրավունքի սահմանափակման:

Դատարանների նյութատեխնիկական ապահովվածության բարելավման, դատավորների և նրանց կցված ծառայողների թվաքանակի ավելացման, նրանց սոցիալական երաշխիքների, այդ թվում՝ վարձատրության բարելավման և դատական համակարգ նոր կադրերի ներգրավման խթանման խնդիրները չպետք է հիմք դառնան մարդու ու այն էլ սահմանադրական իրավունքները սահմանափակող կառուցակարգեր ստեղծելու համար. իրավունքներ, որոնց պաշտպանությունը երաշխավորելը և դրանց ոտնահարումը նախականիսելը պետք է լինի հենց պետության առաջնային գերակայություններից մեկը:

Ընդունելի չէ նաև որպես պետական տուրքի դրույքաչափերը բարձրացնելու հիմնավորում նվազագույն աշխատավարձի փոփոխությունների վկայակոչումը, որ 2003 թվականի դրությամբ այն կազմել է 13.000 ՀՀ դրամ, իսկ 2020 թվականին՝ 68.000 ՀՀ դրամ՝ աճելով 5.2 անգամ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վերլուծությունը ցույց է տալիս, որ 2003 թվականից մինչև 2021 թվականն ընկած ժամանակահատվածում նվազագույն աշխատավարձի աճին զուգահեռ աճել են նաև սպառողական ապրանքների, ծառայությունների և այլնի գները, ինչը նշանակում է, որ միայն նվազագույն կամ միջին ամսական աշխատավարձի ցուցանիշները և նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը բավարար չեն պետական տուրքի դրույքաչափերի բարձրացումը հիմնավորելու համար:

Նման խնդիրներն անհրաժեշտ է լուծել այնպիսի մեխանիզմներով, որոնք չեն սահմանափակի անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքները և առավել ևս չեն հանգեցնի դրանց անհամաչափ սահմանափակման: Պետական համակարգում առկա խնդիրները տուրքերի չափերի ավելացումով ու մարդու իրավունքների սահմանափակման միջոցով լուծելը բացարձակ անընդունելի մոտեցում է:

Ուստի, սույն զեկույցում կոնկրետ փաստերով ցույց է տրված, որ պետական տուրքի նոր՝ նախկինի համեմատությամբ ավելի բարձր դրույքաչափերը հանգեցնում են դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի անհամաչափ միջամտության:

Զեկույցի հիմքում են դրվել ինչպես Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված մտահոգություններն ու բողոքները (խնդիրն առաջնահերթ բարձրաձայնել են փաստաբանները), այնպես էլ Պաշտպանի աշխատակազմի՝ հանրային տիրույթում արձանագրած մտահոգություններն ու հրապարակային նյութերի դիտարկման արդյունքները:

Խնդրի հետ կապված ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը դիմել է Սահմանադրական դատարան: Ըստ այդմ, Բարձր դատարանին ուղղված դիմումով վիճարկվել են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 9.1-րդ մասերի

համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 61-րդ, 78-րդ և 81-րդ հոդվածներին: Դիմումով Մարդու իրավունքների պաշտպանը նաև միջնորդել է կասեցնել վիճարկվող հոդվածների գործողությունը մինչև Սահմանադրական դատարանում գործի դատաքննության ավարտը:

Սույն զեկույցի հրապարակման պահի դրությամբ Մարդու իրավունքների պաշտպանի՝ Սահմանադրական դատարան ներկայացրած դիմումի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշում առկա չէ:

Գլուխ 1. Պետական տուրքի բարձր դրույքաչափերի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներն ու հանրային մտահոգությունները

Ազգային ժողովի 2021 թվականի ապրիլի 19-ի նիստում երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է ««Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով բարձրացվել են դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) և դատական նիստի համակարգչային ձայնագրման կրկնօրինակ տալու համար նախատեսված պետական տուրքերի դրույքաչափերը՝ դրամական պահանջով հայցադիմումների համար գործող կարգավորումներով սահմանված՝ հայցագնի 2 տոկոսի չափով պետական տուրքը դարձնելով հայցագնի 3 տոկոսի չափով, պետական տուրքի նվազագույն շեմը 1500 դրամից դարձնելով 6000 դրամ, ոչ դրամական պահանջներով հայցադիմումների համար նախատեսված 4000 դրամ պետական տուրքը դարձնելով 20.000 դրամ, ոչ դրամական պահանջի գործերով վերաքննիչ բողոքների համար նախատեսված պետական տուրքը 10.000 դրամից դարձնելով 30.000 դրամ, վճռաբեկ բողոքների դեպքում՝ 20.000 դրամից 40.000 դրամ, իրավաբանական անձանց սնանկ ճանաչելու դիմումների համար նախատեսված 500.000 դրամ պետական տուրքը դարձնելով 1.000.000 դրամ և այլն:

Պետական տուրքի նախկինում սահմանված դրույքաչափերն ավելացվել են 2-5 անգամ, առանձին դեպքերում մինչև 10 անգամ (իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման մասին դիմումների համար նախկին 2.000 դրամի փոխարեն ներկայում գանձվում է 20.000 դրամի չափով պետական տուրք): Վերացվել են պետական տուրքի գծով առկա որոշ արտոնություններ, մասնավորապես՝ ֆիզիկական անձինք և ոչ առևտրային կազմակերպությունները պետական տուրքի վճարումից չեն ազատվում վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունած որոշման դեմ բողոքներով, գործը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու մասին դատարանի որոշումը բեկանելու, հայցերի ապահովման կամ ապահովման մի տեսակը մեկ այլ տեսակով փոխարինելու վերաբերյալ հայցերով, դատարանների վճիռներով նշանակված տուգանքների զիջման կամ նվազեցման վերաբերյալ հայցերով, հարկադիր կատարողների գործողությունները բողոքարկելու վերաբերյալ հայցերով և այլն:

Փաստորեն, պետական տուրքի դրույքաչափերը զգալիորեն ավելացել են, ինչն առաջ է բերել մտահոգություն առ այն, որ դրանք կարող են հանգեցնել անձանց՝ դատարանի մատչելիության իրավունքի անհամաչափ սահմանափակման: Սահմանված նոր

դրույքաչափերը խնդրահարույց են անձանց խախտված իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու հարցում խոչընդոտներ ստեղծելու առումով և հաշվի չեն առնում հասարակության սոցիալական առանձնահատկություններն առհասարակ:

Ուստի, պետական տուրքի նոր՝ նախկինից բարձր դրույքաչափերի իրավաչափությունը դիտարկվել է անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի և համաչափության սահմանադրական սկզբունքի պատշաճ երաշխավորման համատեքստում:

Պետական տուրքի սահմանված դրույքաչափերի՝ անձի դատական պաշտպանության իրավունքի վրա հնարավոր բացասական ազդեցության վերաբերյալ մտահոգություններ են արտահայտվել նաև Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներով ու դիմումներով:

Խնդիրն առաջնահերթ բարձրացրել են փաստաբանները: Մասնավորապես, նրանք խնդրահարույց են համարում այն, որ պետական տուրքի դրույքաչափերն այնքան են բարձրացվել, որ կասկածի տակ է դրվում անձի դատական պաշտպանության, արդար դատաքննության և առհասարակ դատարանի մատչելիության իրավունքների արժեքանական նշանակությունը: Ստացվում է՝ պետական տուրքի դրույքաչափերի բարձրացումը խաթարում է այս իրավունքների էությունը: Մեկ այլ մտահոգության համաձայն՝ պետական տուրքի սահմանված բարձր դրույքաչափերը, ի թիվս այլ վարույթների, բացասական ազդեցություն կարող են ունենալ հատկապես գումարի բռնագանձման պահանջներով պարզեցված վարույթների վրա:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն արձանագրել է մտահոգություններ հանրային տիրույթում: Թե՛ հանրային տիրույթի, թե՛ Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված մտահոգությունների թվում առկա են նաև այնպիսիք, որ սոցիալական վիճակի պատճառով անգամ գործող սակագների պարագայում հնարավոր չի լինում վճարել պետական տուրքը: Մարդն այդպիսով փաստացի զրկվում է դատական պաշտպանության իր սահմանադրական իրավունքի իրականացման հնարավորությունից: Պետական տուրքի դրույքաչափերի բարձրացումն ուղիղ կապվում է արդարադատության մատչելիության խախտման՝ քաղաքացու վրա դնելով անհամաչափ ֆինանսական լրացուցիչ բեռ¹:

Հաշվի առնելով պետական տուրքի դրույքաչափերի բարձրացման հետ կապված հանրային լայն հետաքրքրությունը, մտահոգությունները և անձի՝ դատական պաշտպանության իրավունքի վրա դրա հնարավոր բացասական ազդեցությունը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում նախաձեռնվել են

¹ Տե՛ս, օրինակ՝ <https://www.e-draft.am/projects/2576/digest>, <https://armenpress.am/arm/news/1021114.html>, <https://168.am/2020/07/09/1332681.html> հղումներով:

ուսումնասիրություններ, բոլոր բողոքներն ու հանրային մտահոգությունները ենթարկվել են բազմակողմանի վերլուծության:

Դրանից բացի, խնդրո առարկա օրենսդրական կարգավորումներին սահմանադրաիրավական հարթությունում անդրադառնալուց առաջ հարկ է նկատել, որ դրանք Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ուշադրության առարկա են եղել դեռևս նախագծային փուլում, և մի շարք սկզբունքային մտահոգություններ՝ դատարանի մատչելիության իրավունքի երաշխիքների պահպանման առումով, առաջ են քաշվել այդ նախագծի վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարծիքում²: Մինչդեռ, այդ մտահոգությունները չեն փարատվել նախագծի հետագա քննարկման փուլերում և պահպանվել են Բարձր դատարանում վիճարկման առարկա օրենսդրական լուծումներում ևս:

Ուստի, այս առումով մարդու սահմանադրական իրավունքների տեսանկյունից խնդրահարույց դրույթների բովանդակության դիտարկումն իրականացվել է՝ նաև հաշվի առնելով նախագծային փուլում դրանց ոչ բավարար հիմնավորվածության, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի մտահոգությունները չփարատելու խնդիրները:

Այսպիսով, բարձրացված հարցերի դիտարկման արդյունքները վեր են հանել խնդրի համակարգային բնույթն ու սահմանադրականության հարթությունում այն դիտարկելու անհրաժեշտությունը:

² Հասանելի է <https://ombuds.am/images/files/2ebf3336bf9492872309912829c5fc4d.pdf> հղումով:

Գլուխ 2. Խնդրո առարկա կարգավորումների և դրանց հիմնավորումների անընդունելիությունը՝ դատական պաշտպանության (դատարանի մատչելիության) իրավունքի պատշաճ երաշխավորման տեսանկյունից

Որպես պետական տուրքի նախկինում սահմանված դրույքաչափերը զգալիորեն բարձրացնելու հիմնավորում՝ առաջ է քաշվել այն փաստարկը, որ պետական տուրքի դրույքաչափերը փոփոխության չեն ենթարկվել ««Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 1999 թվականի հոկտեմբերի 12-ի ՀՕ-4 օրենքի ընդունումից ի վեր, ինչի արդյունքում Օրենքի դրույքաչափերը չեն արտացոլել երկրի սոցիալ-տնտեսական հարաբերությունների առկա իրավիճակը: Որպես հիմնավորում ներկայացված մեկ այլ փաստարկ է արդարադատության իրականացման ծախսերը դատարանների կողմից հավաքագրված պետական տուրքի գումարները մինչև 4 և ավելի անգամ գերազանցելու ցուցանիշը:

Պետական տուրքի դրույքաչափերի բարձրացումն «արդարացնող» վերը նշված հիմնավորումներն ընդունելի չեն կարող համարվել հետևյալ հիմնավորմամբ:

Հիմնավորումների խոցելիությունը՝ աշխատավարձի բարձրացման ցուցանիշների տեսանկյունից.

Որպես պետական տուրքի ավելի բարձր դրույքաչափերը հիմնավորող փաստ՝ ՀՕ-177-Ն օրենքի նախագծի հիմնավորումներում նշվել է նվազագույն աշխատավարձի ցուցանիշը, որը 2003 թվականի դրությամբ կազմել է 13.000 ՀՀ դրամ, իսկ 2020 թվականին՝ 68.000 ՀՀ դրամ՝ աճելով 5.2 անգամ:

Շատ կարևոր է խնդրին միակողմանի մոտեցում չցուցաբերելը: Խոսքն այն մասին է, որ 2003 թվականից մինչև 2021 թվականն ընկած ժամանակահատվածում նվազագույն աշխատավարձի աճին զուգահեռ աճել են նաև սպառողական ապրանքների, ծառայությունների և այլնի գները: Այսպես, եթե ՀՀ վիճակագրական կոմիտեի armstat.am կայքի «Գնաճի հաշվիչ³» դաշտում ընտրենք, օրինակ՝ 2003 թվականի մայիս և 2021 թվականի մայիս ամիսները, ապա կտեսնենք, որ այդ տարիների ընթացքում գնաճը կազմել է 94.1 %: Թվային այս ցուցիչը վկայում է այն մասին, որ տարիների ընթացքում նվազագույն աշխատավարձի աճին զուգահեռ աճել են նաև ապրանքների շուկայական գները, ինչը նշանակում է, որ միայն նվազագույն կամ միջին ամսական աշխատավարձի ցուցանիշները և նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը բավարար չեն պետական տուրքի դրույքաչափերի բարձրացումը հիմնավորելու համար:

³ Հասանելի է <https://www.armstat.am/am/?nid=714> հղումով:

Բացի այդ, 2020 թվականի նախորդ տարվա՝ 2019 թվականի համեմատությամբ սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի գինն ավելացել է 1 տոկոսով, հագուստի գինը՝ 3, դեղագործական ապրանքների գինը՝ 1.3, բժշկական ծառայությունների արժեքը՝ 2.3, կրթության ոլորտում մատուցվող ծառայությունների արժեքը՝ 3.6 տոկոսով և այլն⁴: Սրանք ցուցանիշներ են, որոնց հետ ևս պետք է հաշվի նստել:

Դատարանների ծանրաբեռնվածության գործոնների միակողմանի դիտարկումը.

Որպես ՀՕ-177-Ն օրենքի ընդունման հիմնավորում՝ բերվել է արդարադատության իրականացման ծախսերը դատարանների կողմից հավաքագրված պետական տուրքի գումարները մինչև 4 և ավելի անգամ գերազանցելու ցուցանիշը:

Բացի այդ, շահագրգիռ մարմինների նկատառումներն ու դիրքորոշումներն ամփոփող ամփոփաթերթում նշվել է, որ պետական տուրքի վճարումից ձևավորվող միջոցների հաշվին հնարավոր կլինի բարելավել դատարանների նյութատեխնիկական ապահովվածությունը, ավելացնել դատավորների և նրանց կցված ծառայողների թվաքանակը, բարելավել նրանց սոցիալական մի շարք երաշխիքներ, այդ թվում՝ վարձատրությունը, խթանել նոր կադրերի ներգրավումը դատական համակարգ:

Պետական տուրքի դրույքաչափերը մի քանի անգամ բարձրացնելու նման հիմնավորումները խնդրահարույց են այն առումով, որ դա առաջ է բերում այնպիսի ընկալում, թե դատարանների բնականոն գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ ծախսերը հնարավոր է ծածկել միայն պետական տուրքերի գումարներն ավելացնելով ու դրանցից ստացվող միջոցների հաշվին: Այդպես լինի՝ նշանակում է որքան շատ բարձրացնենք տուրքերի գումարները, այնքան արագ ու հեշտ կլուծվեն խնդիրները: Մինչդեռ, յուրաքանչյուր տարի «ՀՀ պետական բյուջեի մասին» օրենքներով ՀՀ դատարանների բնականոն գործունեությունն ապահովելու նպատակի համար գումար է հատկացվում ՀՀ դատական դեպարտամենտին: Այսինքն՝ արդարադատության իրականացման այդ գործընթացի շահառուն ողջ հասարակությունն է, ուստի առնվազն արդարացված չէ դատարանների բնականոն գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ ծախսերի վճարման ողջ բեռը միայն դատավարության մասնակիցների վրա դնելը՝ հատկապես նկատի ունենալով, որ այդպիսով սահմանափակվելու է դատարանի մատչելիության իրավունքը:

Դատարանների նյութատեխնիկական ապահովվածության բարելավման, դատավորների և նրանց կցված ծառայողների թվաքանակի ավելացման, նրանց

⁴ Հասանելի է https://www.armstat.am/file/article/sv_05_20a_130.pdf հղումով, համապատասխանաբար՝ էջ 45, 48, 49 և 50:

սոցիալական մի շարք երաշխիքների, այդ թվում՝ վարձատրության բարելավման և դատական համակարգ նոր կադրերի ներգրավման խթանման խնդիրները չպետք է հիմք հանդիսանան անձանց իրավունքները սահմանափակող կառուցակարգեր սահմանելու համար. իրավունքներ, որոնց պաշտպանությունը երաշխավորելը և դրանց ոտնահարումը նախականիսելը պետք է լինի հենց պետության առաջնային գերխնդիրներից մեկը: Ուստի, նման խնդիրներն անհրաժեշտ է լուծել այնպիսի կառուցակարգերի միջոցով, որոնք որևէ կերպ չեն առնչվի անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների հետ և առավելապես՝ չեն հանգեցնի դրանց սահմանափակման:

Պետական համակարգում առկա խնդիրները տուրքերի չափերի ավելացումով ու մարդու իրավունքների սահմանափակման միջոցով լուծելը բացարձակ անընդունելի մոտեցում է:

Նշվածից բացի, դատարանների ծանրաբեռնվածության գործոնները միակողմանի են դիտարկվել այն առումով, որ հաշվի չեն առնվել արդարադատության իրականացման ծախսերն էապես նվազեցնող կառուցակարգերը, որոնք ներդրվել են 2018 թվականի փետրվարի 9-ին ընդունված և նույն թվականի ապրիլի 9-ին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինն, իրավաբանական անձին, անհատ ձեռնարկատիրոջը, ինչպես նաև գործին մասնակցող անձի՝ փաստաբանի կարգավիճակ ունեցող ներկայացուցչին հասցեագրված դատական ծանուցագիրն ուղարկվում է *նրա պաշտոնական էլեկտրոնային փոստին*, բացառությամբ այն դեպքերի, երբ նման եղանակով ծանուցում իրականացնելն անհնար է: Ընդ որում՝ օրենսդիրն այս մարմինների վրա է դրել իրենց պաշտոնական էլեկտրոնային փոստին կամ իրենց կողմից տրամադրված էլեկտրոնային հաղորդակցության միջոցներին ուղարկված դատական ծանուցագիրը չկարդալու անբարենպաստ հետևանքները կրելու պարտականությունը:

Միաժամանակ, նույն հոդվածի 5-րդ մասով սահմանվել է, որ հայցադիմումը (դիմումը) վարույթ ընդունելու մասին որոշումը, գործին մասնակցող անձ ներգրավելու որոշումը կամ դատական ծանուցագիրն ստանալու օրվանից, բացառությամբ նույն օրենսգրքի 95-րդ հոդվածի 5-րդ մասով և 99-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի, գործին մասնակցող անձը *հերթական դատական նիստի ժամանակի և վայրի վերաբերյալ ծանուցվում է դատական իշխանության պաշտոնական կայքում համապատասխան տեղեկությունները տեղադրելու միջոցով*: Գործին մասնակցող անձը պարտավոր է ինքնուրույն ձեռնարկել միջոցներ՝ գործով դատական նիստի ժամանակի և վայրի վերաբերյալ դատական իշխանության պաշտոնական կայքից տեղեկություններ ստանալու

համար: Մինչդեռ, մինչև 2018 թվականի ապրիլի 9-ը գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կարգավորումների ուժով միայն իրավաբանական անձանց ուղղված ծանուցումներն էին իրականացվում «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով սահմանված կարգով, իսկ դատավարության մյուս մասնակիցներին ծանուցագրերն ուղարկվում էին պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հանձնվում առձեռն:

Ակնհայտ է, որ գործող իրավակարգավորումների պայմաններում զգալիորեն հեշտացվել է դատական ծանուցման կարգը, ինչը միաժամանակ ենթադրում է դատական *ծանուցագրերի համար նախատեսված ծախսերի նվազում:*

Պեղական տուրքի գծով օրենքով սահմանված որոշ արտոնությունների վերացման հիմնավորվածությունը.

Մինչև Օրենքում կատարված օրենսդրական փոփոխություններն ու լրացումները պետական տուրքի գծով սահմանված որոշ արտոնություններ ՀՕ-177-Ն օրենքով վերացվել են:

Մասնավորապես, Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին պարբերության «թ» կետով սահմանված էր, որ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատում են ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝ գործը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու մասին դատարանի որոշումը բեկանելու, հայցերի ապահովման կամ ապահովման մի տեսակը մեկ այլ տեսակով փոխարինելու վերաբերյալ հայցերով, երևան եկած նոր հանգամանքների հետևանքով դատարանի վճիռը կամ որոշումը վերանայելու վերաբերյալ գանգատներով, դատարանների վճիռներով նշանակված տուգանքների զիջման կամ նվազեցման վերաբերյալ հայցերով, դատական կատարածուների գործողությունները գանգատարկելու վերաբերյալ դիմումներով, տուգանքների զիջումը կամ նվազեցումը մերժելու մասին դատարանների որոշումների դեմ գանգատներով, դատարանների որոշումների դեմ մյուս գանգատներով, վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունված որոշման դեմ գանգատներով:

Մինչդեռ, ՀՕ-177-Ն օրենքով պետական տուրքի գծով թվարկված արտոնությունները վերացվել են: Հարկ է նկատել, որ թվարկված արտոնությունները (բացառությամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունված որոշման դեմ բողոքների դեպքի) վերացնելու անհրաժեշտության վերաբերյալ որևէ հիմնավորում և անդրադարձ չի կատարվել ՀՕ-177-Ն օրենքի նախագծի ընդունման հիմնավորումներում:

Նախագծային ցանկացած լրացում կամ փոփոխություն պետք է ունենա պատշաճ հիմնավորում, երբ խոսքն առավել ևս վերաբերում է անձի իրավունքներին միջամտություն ենթադրող, վիճակն այլ կերպ վատթարացնող կարգավորումներին: Պետք է բացառել այն իրավիճակները, երբ օրենսդրական գործող կարգավորումներում որևէ նորմ փոփոխվում, լրացվում կամ առավել ևս վերացվում է՝ առանց դրա որևէ հիմնավորման կամ անհրաժեշտության փաստարկման:

Որպես վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունած որոշման դեմ բողոքների հետ կապված հիմնավորում թերևս միայն նշվել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա են նաև այլ դեպքեր, երբ լիազոր մարմինը ենթարկում է վարչական պատասխանատվության: Միայն նման անորոշ ձևակերպմամբ է հիմնավորվել վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունած որոշման դեմ բողոքներով ֆիզիկական անձանց և ոչ առևտրային կազմակերպություններին պետական տուրքի չվճարման արտոնությունից զրկելը:

««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված կարծիքների ամփոփաթեթում նախագծի հեղինակների կողմից որպես հիմնավորում նշվել է հետևյալը՝

- բազմաթիվ են այն գործերը, որոնցով վիճարկվող վարչական ակտերով նշանակված տուգանքների գումարները հիմնականում կազմում են 5.000 ՀՀ դրամ: Պետական մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց ակտերն անվավեր ճանաչելու հետ կապված իրավահարաբերությունների վերաբերյալ դատական գործերի 91.5 տոկոս դեպքում հայցվորները ֆիզիկական անձինք են ընդդեմ ՀՀ ճանապարհային ոստիկանության (հայցագիրը հիմնականում 5.000 ՀՀ դրամ է): Այդ անձինք նշված գործերի շրջանակներում ազատված էին պետական տուրքի վճարելու պարտավորությունից, մինչդեռ, այդ հայցերի բավարարման դեպքում ՀՀ ճանապարհային ոստիկանությունը պարտավորվում է վճարել և՛ պետական տուրքի գումարը (4000 ՀՀ դրամը), և՛ փոխհատուցել ֆիզիկական անձի ներկայացուցչի՝ փաստաբանի՝ դատարանի կողմից սահմանված ողջամիտ վարձատրությունը, որը միջինում կազմում է 15.000 ՀՀ դրամ:

- Բարձրագույն դատական խորհրդի՝ արդարադատության արդյունավետության վերաբերյալ հայեցակարգի համաձայն՝ պետական մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց ակտերն անվավեր ճանաչելու հետ կապված իրավահարաբերությունների վերաբերյալ վարչական գործերով պետության վարչարարական բեռը մեկ գործի հաշվով կազմում է միջինը $15.000 + 35.356 = 50.356$ ՀՀ դրամ, իսկ հնարավոր գանձվող գումարը՝ 5.000 ՀՀ դրամ: Արդյունքում, նման տիպի վարչական արդարադատություն

իրականացնելու համար պետությունը տարեկան ծախսում է ավելի քան 625 միլիոն դրամ՝ շուրջ 70 միլիոն դրամին առնչվող վեճը լուծելու համար: Այլ կերպ, պետության կողմից տարեկան կտրվածքով մատուցվում է շուրջ 555 միլիոն դրամի պետական տուրքի օբյեկտ համարվող ծառայություն՝ առանց պետական տուրք գանձելու:

Քանակական այս տվյալներն արտացոլում են միայն արդարադատության իրականացման ֆինանսական բաղադրիչը: Այսինքն՝ Օրենքով խնդրո առարկա լուծումները տրվել են՝ ելնելով միայն ֆինանսական արդյունավետությունից՝ այդպիսով անտեսելով բուն արդարադատության իրականացման նպատակը և դրա որակական կողմը, ոչ թե քանակական: Օրինակ, վիճակագրությունը կազմելիս հաշվի չի առնվել այն, թե վարչական մարմնի կողմից ոչ պատշաճ վարչարարություն իրականացնելու արդյունքում մարդիկ կարողացել են արդյոք վերականգնել իրենց խախտված իրավունքները, թե ոչ: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ ոչ պատշաճ վարչարարության իրականացման հետևանքով դատական կարգով բողոքարկվող վարչական ակտերի մեծաքանակությունը պետության խնդիրն է, և դա պետք է լուծվի ոչ թե ի հաշիվ անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման, այլ պետության կողմից իրականացվող վարչարարությունը բարելավելու և ոչ պատշաճ վարչարարության իրականացման հնարավոր դեպքերը կանխարգելելու միջոցով:

Մյուս կողմից, ստեղծված իրավիճակում խնդիրն ամենևին դատական գործընթացի ավարտից հետո պետական տուրքի՝ դատավարության այս կամ այն կողմից գանձելը չէ: Խնդիրն այն է, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունած որոշման դեմ բողոքների համար պետական տուրք սահմանելու պայմաններում անձինք, նախնական գնահատման ենթարկելով դատարան դիմելու դեպքում իրենց հայցի բավարարման հավանականությունը և չբավարարվելու հնարավոր ռիսկերը, կարող են խուսափել դատարան դիմելու իրենց իրավունքն իրացնելուց: Եվ դա այն դեպքում, երբ նման հայցերի համար պետական տուրքի գծով արտոնություն սահմանված լինելու (այսինքն՝ նախկինում գործող արտոնության պահպանման) պայմաններում նրանք կարող էին դիմել դատարան և հասնել իրենց խախտված իրավունքների վերականգնման:

Հարկադիր կատարողների գործողությունները բողոքարկելու վերաբերյալ դիմումներով պետական տուրքի վճարումից ազատելու արտոնության վերացումը հիմնավորվել է նրանով, որ հարկադիր կատարողների գործողությունները բողոքարկելու վերաբերյալ դիմումներով պետական տուրք չվճարելու արտոնությունը շատ դեպքերում հանգեցնում է անհարկի բողոքարկումների՝ խաթարելով դատական ակտերի հարկադիր կատարման գործընթացը:

Բերված հիմնավորման կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝

վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, բացառությամբ այն դեպքերի, երբ վիճարկվում է կատարողական վարույթի ընթացքում հարկադիր կատարողի կողմից կայացված վարչական ակտ: Այսինքն, հարկադիր կատարողի կայացրած վարչական ակտերի դատական կարգով բողոքարկումն ինքնին անգամ չի կասեցնում այդ ակտերի կատարումը, հետևաբար խոսք չի կարող գնալ դատական ակտերի հարկադիր կատարման գործընթացի խաթարման մասին:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ որևէ կերպ հիմնավորված և արդարացված չեն ՀՕ-177-Ն օրենքի այն լուծումները, որոնց ուժով ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք զրկվելու են պետական տուրքի գծով եղած արտոնություններից:

Այսպիսով, միանշանակ է, որ պետական տուրքի գծով եղած արտոնությունների վերացումը, ինչպես նաև պետական տուրքի բարձր դրույքաչափերը կարող են սահմանափակել անձանց՝ դատական մատչելիության իրավունքը՝ խոչընդոտ հանդիսանալով իրենց խախտված իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու հարցում:

**Գլուխ 3. Պետական տուրքի բարձր դրույքաչափեր սահմանելու
իրավաչափությունը անձի դատական պաշտպանության (դատարանի
մատչելիության) իրավունքի պատշաճ երաշխավորման տեսանկյունից. խնդրի
դիտարկումը սահմանադրաիրավական և միջազգային իրավական
հարթություններում**

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Դատարանի մատչելիության իրավունքի երաշխավորման համատեքստում ՀՀ Սահմանադրական դատարանն իր 2016 թվականի մարտի 10-ի թիվ ՍԴՈ-1257 որոշմամբ կարևորել է իրավակարգավորման որոշ սկզբունքներ (չափանիշներ), որոնք հանգում են հետևյալին.

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը,

Սահմանադրական դատարանն իր 2015 թվականի մարտի 3-ի թիվ ՍԴՈ-1192 որոշմամբ արձանագրել է, որ իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի իմպերատիվ նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և իր ծանրությամբ չհանգեցնի իրավունքի էության խախտման:

Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ դատարաններում պետական տուրք վճարելու պարտականությունը չի հետապնդում դատարան դիմելու սահմանադրական իրավունքից անձին զրկելու նպատակ: **Օրենսդիրը, կարգավորելով դատարաններում պետական տուրքի գանձման հետ կապված իրավահարաբերությունները, կաշկանդված է քաղաքացիական իրավունքների ու ազատությունների պաշտպանության սահմանադրական սկզբունքներով, մասնավորապես, դատարանի մատչելիության սկզբունքի երաշխավորման պարտականությամբ: Ուստի, օրենսդրի պարտականությունն է երաշխավորել պատշաճ հավասարակշռություն, մի կողմից, դատարաններում պետական տուրք գանձելու՝ պետության օրինավոր շահի, դատարաններում պետական տուրք վճարելու՝ անձի սահմանադրական պարտականության և, մյուս կողմից՝ դատարանների միջոցով իր**

իրավունքները պաշտպանելու՝ դիմողի օրինավոր շահի միջև: Հետևաբար, այդպիսի հավասարակշռության ապահովումը հետապնդում է սահմանադրաիրավական նպատակ (Սահմանադրական դատարանի 2010 թվականի մայիսի 25-ի թիվ ՍԴՈ-890, 2016 թվականի ապրիլի 19-ի թիվ ՍԴՈ-1265, 2018 թվականի հուլիսի 10-ի թիվ ՍԴՈ-1423 որոշումներ):

2018 թվականի հուլիսի 10-ի թիվ ՍԴՈ-1423 որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է նաև, որ պետական տուրք վճարելու պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում, նախ՝ որոշակիորեն փոխհատուցել պետության կողմից հանրային ծառայություններ մատուցելու, այդ թվում՝ արդարադատության իրականացման հետ կապված ծախսերը, իսկ վերջինիս դեպքում նաև՝ մասամբ նախականիսել ակնհայտ անհիմն հայցադիմումների հոսքը՝ նպաստելով թե՛ արդարադատության իրականացման արդյունավետության բարձրացմանը և թե՛ դատարան դիմելու իրավունքի իրացման հնարավոր շահարկման կանխարգելմանը:

Դատարանի մատչելիության հիմնախնդրին բազմիցս անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ նշելով, որ թեև դատական պաշտպանության իրավունքը, որի մի մասն էլ կազմում են «դատարան դիմելու» և «դատարանի մատչելիության» իրավունքները, բացարձակ չեն և կարող են ենթարկվել սահմանափակումների, սակայն կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի դրանից, սահմանափակումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին չի համապատասխանի, եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն՝ գործնական և արդյունավետ իրավունքների երաշխավորման ապահովմամբ⁵:

Եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքը պետք է լինի գործնական և արդյունավետ⁶: Որպեսզի դատարանի մատչելիության իրավունքը լինի արդյունավետ, անձը պետք է հստակ և գործնական հնարավորություն ունենա վիճարկելու այն ակտը, որով միջամտություն է կատարվել իր իրավունքներին⁷:

⁵Տե՛ս Ալ-Ադսանին ընդդեմ Միացյալ Թագավորության (Al-Adsani v. United Kingdom) գործով 2001 թվականի նոյեմբերի 21-ի վճիռը, գանգատ թիվ 35763/97, կետ 53: Խալֆաուին ընդդեմ Ֆրանսիայի (Khalfaoui v. France) գործով 2000 թվականի մարտի 14-ի վճիռը, գանգատ թիվ 34791/97, կետ 35-36: Ուեյթը և Քեննեդին ընդդեմ Գերմանիայի (Waite and Kennedy v. Germany) գործով 1999 թվականի փետրվարի 18-ի վճիռը, գանգատ թիվ 26083/94, կետ 59: Մարինին ընդդեմ Ալբանիայի (Marini v. Albania) գործով 2007 թվականի դեկտեմբերի 18-ի վճիռը, գանգատ թիվ 3738/02, կետ 113 և այլն:

⁶ Տե՛ս Բելլեթն ընդդեմ Ֆրանսիայի (Bellet v. France) գործով 1995 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 23805/94, կետ 38:

⁷ Տե՛ս Քանյետե դե Գոնին ընդդեմ Իսպանիայի (Cañete de Goñi v. Spain) գործով 2003 թվականի հունվարի 15-ի վճիռը, գանգատ թիվ 55782/00, կետ 34: Բելլեթն ընդդեմ Ֆրանսիայի (Bellet v. France) գործով 1995 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 23805/94, կետ 38: Բենեֆիցիո Կապպելլա Պաոլինին

Դատարանի մատչելիության իրավունքը խաթարվում է, երբ նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության և արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և այդպիսով խոչընդոտում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննության⁸: **Պետք է համոզվել, որ կիրառվող սահմանափակումները չեն սահմանափակում կամ նվազեցնում դատարանի մատչելիությունն այն աստիճան, որ խախտվի իրավունքի բուն էությունը⁹:**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կոնկրետ գործերով անդրադարձել է նաև դատարան ներկայացվող հայցադիմումների, դիմումների, վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար նախատեսված պետական տուրքի չափերին: Մասնավորապես, **Եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն՝ այն սահմանափակումները, որոնք ունեն գուտ ֆինանսական բնույթ և առնչություն չունեն բողոքարկման հիմքերի կամ դրա հաջողության հեռանկարների հետ, պետք է առանձնապես խիստ քննության ենթարկվեն¹⁰:**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գնահատմամբ՝ պետական տուրքը վճարելու պարտավորությունը թեև չի կարող դիտարկվել որպես դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակում, որն ինքնին չի համապատասխանում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին, այնուամենայնիվ այդ տուրքերի գումարը գնահատելը որոշակի գործի հատուկ հանգամանքների տեսանկյունից, ներառյալ **դրանք վճարելու դիմումատուի կարողությունը** և դատավարության այն փուլը, որում նման սահմանափակումը կիրառվել է, հանգամանքներ են, որոնք էական են որոշելու համար անձն օժտված է եղել դատարանի մատչելիության իրավունքով, թե ոչ¹¹:

ընդդեմ Սան Մարինոյի (Beneficio Cappella Paolini v. San Marino) գործով 2004 թվականի հոկտեմբերի 13-ի վճիռը, գանգատ թիվ 40786/98, կետ 28: Նունե Դիասն Պորտուգալիայի (Nune Dias v. Portugal) գործով Եվրոպական դատարանի որոշումը, հասանելի է <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-23730> հղումով և այլն:

⁸ Տե՛ս Դումիտրու Գեորգիեսն ընդդեմ Ռումինիայի (Dumitru Gheorge v. Romania) գործով 2016 թվականի սեպտեմբերի 12-ի վճիռը, գանգատ թիվ 33883/06, կետ 28: Էֆստատիուն և Ուրիշներն ընդդեմ Հունաստանի (Efsthathiou and Others v. Greece) գործով 2006 թվականի դեկտեմբերի 12-ի վճիռը, գանգատ թիվ 36998/02, կետ 24:

⁹ Տե՛ս Սիակովսկան ընդդեմ Լեհաստանի (Siatkowska v. Poland) գործով 2007 թվականի հուլիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 8932/05, կետ 102:

¹⁰ Տե՛ս Պոդբիելսկին և Պպու Պոլպուրն ընդդեմ Լեհաստանի (Podbielski and Ppu Polpure v. Poland) գործով 2005 թվականի նոյեմբերի 30-ի վճիռը, գանգատ թիվ 39199/98, կետ 65:

¹¹ Տե՛ս «Պայքար և Հաղթանակ» ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով 2008 թվականի հունիսի 2-ի վճիռը, գանգատ թիվ 21638/03, կետ 48: Կրեուզն ընդդեմ Լեհաստանի (Kreuz v. Poland) գործով 2001 թվականի հունիսի 19-ի վճիռը, գանգատ թիվ 28249/95, կետ 60: Պոդբիելսկին և Պպու Պոլպուրն ընդդեմ Լեհաստանի (Podbielski and Ppu Polpure v. Poland) գործով 2005 թվականի նոյեմբերի 30-ի վճիռը, գանգատ թիվ 39199/98, կետ 64:

Գործերից մեկով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում այն հիմքով, որ դիմողը չափազանց բարձր պետական տուրքի պատճառով չի կարողացել վերաքննության կարգով բողոքարկել իր դեմ կայացված դատական ակտը: Եվրոպական դատարանը չափազանց բարձր է համարել 10.000 լեհական դրամ պետական տուրք պահանջելն այն ընկերությունից, ով վերջին մի քանի տարվա ընթացքում միայն ֆինանսական կորուստներ է կրել, և որի բանկային հաշիվները սառեցված են եղել: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում արձանագրելիս Եվրոպական դատարանը հաշվի է առել նաև այն, որ դատարանն անտեսել է ընկերության ֆինանսական դրությունը հիմնավորող ապացույցները՝ մերժելով պետական տուրքի վճարումը տարածամկետելու միջնորդությունը¹²: Մեկ այլ գործով ևս Եվրոպական դատարանն անհամաչափ է գնահատել դիմողներից 323.264 եվրոյի չափով պետական տուրք պահանջելը 30.609.289 եվրոյի չափով հայցապահանջի համար՝ կրկին արձանագրելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում, քանի որ այդպիսով դիմողները զրկվել են իրենց իրավունքների և շահերի դատական պաշտպանության իրավունքից¹³:

Նախագծի հեղինակ ՀՀ արդարադատության նախարարությունը 2020 թվականի հուլիսի 19-ին «Facebook.com» սոցիալական ցանցում կատարած հրապարակմամբ փորձել է փարատել ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի շուրջ բարձրացված հանրային մտահոգությունները՝ նշելով, թե Մարդու իրավունքների եվրոպական դատարանի տեսանկյունից դատարանի մատչելիության իրավունքն ինքնին պետության կողմից կարգավորում պահանջող երևույթ է, և պետությունն ազատ է այդ իրավունքն իրականացնելու ուղղված միջոցներն ընտրելիս: Նույն հրապարակմամբ միաժամանակ վկայակոչվել են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներ, որոնց հիման վրա էլ, ըստ էության, Նախարարությունը նման եզրահանգման է եկել:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ արդարադատության նախարարության հրապարակման մեջ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վկայակոչված վճիռները դիտարկվել են միակողմանի և հատվածական: Սա էլ իր հերթին վիճելի է դարձնում արված եզրահանգումները:

Մասնավորապես, Նախարարության հրապարակմամբ վկայակոչված գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը թեև նշել է, որ դատարանի մատչելիության իրավունքը բացարձակ չէ, այն կարող է ենթարկվել սահմանափակումների, քանի որ դատարանի մատչելիության իրավունքն իր բնույթով ենթակա է կարգավորման պետության

¹² Տե՛ս Պոդբիելսկին և ՊՊու Պոլպուրն ընդդեմ Լեհաստանի (Podbielski and Ppu Polpure v. Poland) գործով 2005 թվականի նոյեմբերի 30-ի վճիռը, գանգատ թիվ 39199/98, կետ 65-70:

¹³ Տե՛ս Ուեյզմանը և ուրիշներն ընդդեմ Ռումինիայի (Weissman and Others v. Romania) գործով 2006 թվականի մայիսի 24-ի վճիռը, գանգատ թիվ 63945/00, կետ 38-44:

կողմից և որ պետությունները որոշակի հայեցողության շրջանակ ունեն: Եվրոպական դատարանը, սակայն, նշել է նաև, որ **չնայած վերոգրյալին՝ կիրառված սահմանափակումներն, այնուամենայնիվ, չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Կոնվենցիայի պահանջների պահպանման վերաբերյալ վերջնական որոշումը պատկանում է Դատարանին**¹⁴:

Այսինքն՝ Եվրոպական դատարանի իրավաբանությունից է բխում այն, որ պետությունը թեև որոշակի հայեցողության շրջանակ ունի դատարանի մատչելիության իրավունքի կարգավորման հարցում, սակայն այդ հայեցողությունը բացարձակ չէ: Նշվածն արձանագրելով՝ Եվրոպական դատարանը միաժամանակ առաջ է քաշել այդ հայեցողության իրավաչափ դրսևորման շրջանակները:

Այսպիսով, դատարանի մատչելիության իրավունքի համալիր բացահայտումը բերում է այն միանշանակ համոզման, որ պետական տուրքի՝ Օրենքով սահմանված բարձր դրույքաչափերի գործնական կիրառությունը կարող է առաջ բերել սույն զեկույցով բովանդակային բացահայտում ստացած՝ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի անհամաչափ սահմանափակման և անհիմն միջամտության հարց:

Այն գործերը, որոնցում Եվրոպական դատարանն անդրադարձել է պետական տուրքի չափին, Դատարանը դրանք դիտարկել է համաչափության սկզբունքի ապահովման համատեքստում, որի մասին առավել մանրամասն ներկայցված է սույն զեկույցի ստորևէ ներկայացված շարադրանքում:

¹⁴ Տե՛ս Ալ-Ադսանին ընդդեմ Միացյալ Թագավորության (Al Adsani v. The United Kingdom) գործով 2001 թվականի նոյեմբերի 21-ի վճիռը, գանգատ թիվ 35763/97, կետ 53: Կրեուզն ընդդեմ Լեհաստանի (Kreuz v. Poland) գործով 2001 թվականի հունիսի 19-ի վճիռը, գանգատ թիվ 28249/95, կետ 53: Տոլստոյ Միլոսլավսկին ընդդեմ Միացյալ Թագավորության (Tolstoy Miloslavskiy v. The United Kingdom) գործով 1995 թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատ թիվ 18139/91, կետ 59: Ուրբանեկն ընդդեմ Ավստրիայի (Urbanek v. Austria) գործով 2011 թվականի մարտի 9-ի վճիռը, գանգատ թիվ 35123/05, կետ 48: Յուլինն ընդդեմ Էստոնիայի (Julin v. Estonia) գործով 2012 թվականի օգոստոսի 29-ի վճիռը, գանգատներ թիվ 16563/08, 40841/08, 8192/10 և 18656/10, կետ 158: Ստանկովն ընդդեմ Բուլղարիայի (Stankov v. Bulgaria) գործով 2007 թվականի հոկտեմբերի 12-ի վճիռը, գանգատ թիվ 68490/01, կետ 50 և այլն:

Գլուխ 4. Պետական տուրքի դրույքաչափերի դիտարկումը համաչափության սկզբունքի ապահովման տեսանկյունից

Սույն զեկույցում քննարկվող կարգավորումների՝ օրենքով հետապնդվող նպատակին համաչափության վերաբերյալ ուսումնասիրությունները և Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի դիտարկումները հանգում են հետևյալին.

Սահմանադրության 78-րդ հոդվածը երաշխավորում է համաչափության սկզբունքը՝ ամրագրելով, որ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Սահմանադրությամբ ամրագրված համաչափության սկզբունքի բովանդակությունը բացահայտվել է Սահմանադրական դատարանի նախադեպային իրավունքում: Այսպես, Սահմանադրական դատարանի 2016 թվականի փետրվարի 23-ի թիվ ՍԴՈ-1256 և 2016 թվականի հուլիսի 12-ի թիվ ՍԴՈ-1293 որոշումներում նշվել է, որ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները չպետք է խաթարեն ողջամիտ հավասարակշռությունը հետապնդվող նպատակի և այդ նպատակին հասնելու համար օգտագործված միջոցի միջև:

Հետապնդվող նպատակին հասնելու համար միջոցը պիտանի է այն դեպքում, երբ այն առնվազն կարող է նպաստել այդ նպատակի իրագործմանը: **Հիմնական իրավունքին միջամտել անհրաժեշտ է միայն այն դեպքում, երբ հետապնդվող նպատակին անհնար է հասնել մեկ այլ, սակայն նույնչափ արդյունավետ ճանապարհով, որն ավելի քիչ կսահմանափակի խնդրո առարկա հիմնական իրավունքով պաշտպանված իրավական բարիքը: Բացի այդ, միջամտությունը պետք է համարժեք կամ չափավոր լինի, այսինքն՝ միջամտության սաստկությունը չպետք է անհամարժեք լինի սահմանափակվող հիմնական իրավունքի նշանակությանը և կշռին¹⁵:**

Վճռաբեկ դատարանը 2018 թվականի հունվարի 12-ի թիվ ԵԿԴ/0056/11/17 գործով կայացված որոշմամբ նշել է, որ համաչափության սկզբունքի բովանդակությունից հետևում է, որ իրավունքի սահմանափակման համար ընտրված միջոցը պետք է՝

- պիտանի և անհրաժեշտ լինի հետապնդվող նպատակին հասնելու համար,
- հետապնդվող նպատակի հետ գտնվի համարժեք հարաբերակցության մեջ:

¹⁵ Տե՛ս Վարդան Պողոսյան, Նորա Սարգսյան, Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ սահմանադրությունը, համառոտ պարզաբանումներ: Երևան, Տիգրան Մեծ, 2016, էջ 82:

«Պիտանիության» չափանիշի համաձայն՝ միջոցը համարվում է պիտանի, եթե այն հնարավորություն է տալիս հասնելու հետապնդվող նպատակին: Մինչդեռ, «անհրաժեշտության» չափանիշի դեպքում միջոցը համարվում է անհրաժեշտ, եթե օրենքով հետապնդվող նպատակը չի կարող իրացվել հավասարապես պիտանի և ավելի մեղմ միջոցով, բացի այն միջոցից, որն ընտրվել է:

Նույն որոշմամբ անդրադառնալով կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի համարժեք հարաբերակցությանը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ միջամտության սահմանների խորությունը չպետք է անհամարժեք լինի սահմանափակվող հիմնական իրավունքի արժեքանական նշանակությանը և կշռին: Այլ կերպ՝ կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի միջև պետք է լինի արդարացի հավասարակշռություն, **կիրառվող միջոցը հետապնդվող նպատակին հասնելու համար չպետք է լինի չափից ավելի խիստ՝ շրջանցելով այդ նույն նպատակին նվազագույն ջանքերի գործադրմամբ այլ միջոցներով հասնելու ողջամիտ հնարավորությունները:**

Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների համաձայն՝ մարդու իրավունքի սահմանափակումը կարող է իրականացվել միայն օրենքով՝ երաշխավորելով համաչափությունը, չաղավաղելով իրավունքի էությունը (սահմանափակման հետևանքով իրավունքը չզրկվի իր բովանդակությունից, չվտանգվի դրա գոյությունը)¹⁶:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ սահմանափակումները պետք է անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակությունում, լինեն համաչափ հետապնդվող նպատակին և կրեն ժամանակավոր բնույթ¹⁷: **Կիրառվող ցանկացած «ձևականություն», «սահմանափակում» կամ «տուգանք» պետք է համաչափ լինեն հետապնդվող օրինական նպատակին¹⁸:**

Ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ միջոց համարվելու համար միջամտությունը պետք է «բավականաչափ» հիմնավորված լինի, ինչը պարզելու համար հարկավոր է հաշվի առնել տվյալ գործով հանրությանը հուզող յուրաքանչյուր հայեցակետ¹⁹:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ անհրաժեշտ է ընդգծել, որ համաչափության սկզբունքն անհրաժեշտ է հասկանալ պիտանիության, անհրաժեշտության և համարժեքության համատեքստում: Այսինքն՝ հիմնական իրավունքների և ազատությունների

¹⁶ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 4-ի ՍԴՈ-649 որոշումը, կետ 10:

¹⁷ Տե՛ս Կուիմովն ընդդեմ Ռուսաստանի (Kuimov v. Russia) գործով 2009 թվականի հունվարի 8-ի վճիռը, գանգատ թիվ 32147/04, կետ 92, 96:

¹⁸ Տե՛ս Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության (Handyside v. the United Kingdom) գործով 1976 թվականի դեկտեմբերի 7-ի վճիռը, գանգատ թիվ 5493/72, կետ 49:

¹⁹ Տե՛ս Սանդի Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության (Sunday Times v. The United Kingdom) գործով 1979 ապրիլի 26-ի վճիռը, գանգատ թիվ 6538/74, կետ 65:

սահմանափակման հանգեցնող միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն օրենքի հետապնդած նպատակին հասնելու համար:

Այսպիսով, Սահմանադրական դատարան ներկայացված դիմումով վիճարկվող կարգավորումները դիտարկելով համաչափության սահմանադրական սկզբունքի ապահովման տեսանկյունից՝ հարկ է նշել, որ ՀՕ-177-Ն օրենքների ընդունման հիմնավորումներում պետք է առնվազն բավարար հիմնավորումներ ներկայացվեին առ այն, որ՝

- պետական տուրքի սահմանված նման բարձր դրույքաչափերը պիտանի և անհրաժեշտ են օրենքով հետապնդած նպատակին,

- պետական տուրքի նման բարձր դրույքաչափեր սահմանելն ամբողջությամբ հնարավորություն է տալիս հասնելու հետապնդվող նպատակին և այդ նպատակի հետ գտնվում է համարժեք հարաբերակցության մեջ,

- օրենքի նպատակը չի կարող իրացվել հավասարապես պիտանի և ավելի մեղմ միջոցով, քան պետական տուրքի նման բարձր դրույքաչափեր սահմանելն է,

- պետական տուրքի բարձր դրույքաչափեր սահմանելը չի շրջանցում օրենքի հետապնդած նպատակին նվազագույն ջանքերի գործադրմամբ այլ միջոցներով հասնելու ողջամիտ հնարավորությունը:

Որպես ՀՕ-177-Ն օրենքի նախագծի ընդունման ակնկալվող արդյունք՝ նախատեսվել է համապատասխանեցնել պետական տուրքի դրույքաչափերը սոցիալ-տնտեսական ցուցանիշներին, ինչպես նաև բարձրացնել արդարադատության արդյունավետությունը: Նշվածից բացի, շահագրգիռ մարմինների նկատառումներն ու դիրքորոշումներն ամփոփող ամփոփաթերթում նշվել է, որ դրույքաչափերի բարձրացումն ուղղված է ակնհայտ անհիմն հայցադիմումների հոսքի նախականխմանը՝ այդպիսով բարձրացնելով պետական տուրքի իրականացրած կանխարգելիչ գործառույթի արդյունավետությունը:

Օրենքի հետապնդած նպատակներին համապատասխանության առնչությամբ հարկ է նշել, որ, նախ՝ երկրի սոցիալ-տնտեսական ցուցանիշների բարձրացումը որևէ կերպ պետության համար չի առաջացնում պարտավորություն «թանկացնելու» նաև պետության մատուցած ծառայությունները, այդ թվում՝ արդարադատության կազմակերպման համար անհրաժեշտ ծախսերը: Ուստի՝ պետական տուրքի դրույքաչափերը սոցիալ-տնտեսական ցուցանիշներին համապատասխանեցնելու անհրաժեշտությունը որևէ կերպ չի հիմնավորվում:

Անդրադառնալով ակնհայտ անհիմն հայցադիմումների հոսքի նախականխման և այդպիսով արդարադատության արդյունավետության բարձրացման նպատակին՝ հարկ է նշել, որ օրենսդրական նախաձեռնության հեղինակները հաշվի չեն առել, որ պետական տուրքի դրույքաչափերի բարձրացումը թեև կարող է լուծել ակնհայտ անհիմն հայցադիմումների նախականխման խնդիրը, սակայն դրանով մեկ այլ խնդիր է առաջանում.

այդպիսով միաժամանակ անհիմն սահմանափակվում է ոչ անհիմն հայցադիմումների հոսքը՝ հանգեցնելով դատարանի մատչելիության իրավունքի անհամաչափ սահմանափակման: Փաստորեն, առկա խնդրի լուծումը տրվում է մեկ այլ խնդիր ստեղծելով: Ստեղծված իրավիճակում սկզբունքային է հասկանալ, թե որքանով է արդարացված ակնհայտ անհիմն հայցադիմումների հոսքը նախականիսելն անձանց դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի սահմանափակման հաշվին:

Այս առնչությամբ հարկ է հատուկ ընդգծել, որ գործնականում առկա խնդիրների լուծումը չպետք է տրվի անձանց սահմանադրական իրավունքների սահմանափակման ճանապարհով: Անհրաժեշտ է գտնել բոլորի իրավունքները հավասարակշռող լուծում: Իսկ մինչ այդ՝ անձանց սահմանադրական որևէ իրավունքին միջամտություն ենթադրող օրենսդրական ցանկացած լուծում պետք է բացառել:

Նշված պայմաններում խիստ վիճելի է դառնում Օրենքով ամրագրված պետական տուրքի բարձր դրույքաչափերի պիտանիությունը և օրենքով հետապնդած նպատակներին դրանց անհրաժեշտությունը: Ավելին, պետական տուրքի նման բարձր դրույքաչափերի գործադրումը կասկածի է ենթարկում Օրենքի հետապնդած նպատակի իրավաչափությունը:

Խնդիրը հենց այն է, թե որքանով են առաջարկվող լուծումները՝ թե՛ դատարանի մատչելիության իրավունքի ապահովման և թե՛ իրավաչափ շահերի հավասարակշռման տեսանկյունից համընկնում և օրենսդրորեն ճիշտ արտացոլում օրենքի հետապնդած նպատակները: Դրանից բացի, պետք է նաև լինի այնպես, որ պետության ընտրած իրավական միջոցները լինեն թիրախային, այսինքն՝ յուրաքանչյուր միջոց պետք է ծառայի նպատակին և որ ավելի կարևոր է, այդ նպատակները լինեն իրավաչափ և չհանգեցնեն այլ իրավունքների սահմանափակման:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է ընդգծել, որ պետական տուրքի՝ ՀՕ-177-Ն օրենքով սահմանված բարձր դրույքաչափերը չեն բավարարում Սահմանադրության 78-րդ հոդվածով ամրագրված համաչափության սկզբունքի պահանջները՝ առաջ բերելով Սահմանադրության այդ հոդվածին համապատասխանության հարց: Այդ կարգավորումները հակասում են նաև Սահմանադրության 81-րդ հոդվածի պահանջներին:

Ուստի, ինչպես արդեն նշվել է սույն զեկույցի նախորդ շարադրանքում, Մարդու իրավունքների պաշտպանը դիմել է Սահմանադրական դատարան՝ պետական տուրքի նոր դրույքաչափերի իրավաչափությունը վիճարկելով հենց դատական պաշտպանության իրավունքի ապահովման համատեքստում: